

- 95 նազն քսան ժամուն ելնէաք. զի աւազն ներ-  
քուստ այրէր զմեզ եւ արեգակն ի վերուստ.  
եւ թէ ոք ունի քիլիմ կամ չուլ կամ այլ ինչ՝  
սփռէ եւ հանդէի. եւ որք չունին՝ տապին:  
Այլ եւ ելանեն յաւազէն զանազան մեծ սլի-  
100 ծակք, զորեկսք արեանարբուք եւ խածատեալ  
ծակոտեն զմարմինս մինչ արիւն հոսի: Զի  
անդ ոչ կայ ծառ, ոչ ճիւղ կամ այլ ինչ որ  
հովանի լինի, այլ աւազ է: Եւ ի տեղիս տե-  
ղիս հողմոց հնչմանէ դիզացեալ բարձրացեալ  
105 է աւազն լեռնանման, որպէս յԱնկուրու կամ  
Պէկպողարու ճանապարհն. եւ ի բազմութենէ  
աւազին ոչ ոտիւք, ոչ իշօք, այլ ըզտովք եւ  
ջորովք գնան. թէ աղքատք բոկ երթան՝ այրի  
ստք նոցա, թէ փօսզալով՝ երկու օրն անկցի  
110 ոտիցն:

- Եւ ութ օրն հասաք ի ՂԱԹԻԱՅ խասա-  
պան, որ է կէս ճանապարհին Երուսաղէմայ:  
Եւ անդ մեծ զաֆար կայ. իչուն՝ կէս զուռուչ,  
ձիուն՝ մէկ, ըզտուն՝ երկու: Եւ ըխտաւորքն  
115 անդ արգիլեցին. որք վարթամք էին՝ փու-  
թով տվին. իսկ աղքատք եւ չքաւորք բազում  
գան եւ հարւածս արբին. եւ բռնութեամբ  
առնուին անօրէն Արպնին: Եւ ինձ կ'ստէին թէ  
Դու վասն է՞ր ձի գնեցիր. ժԲ—ժԳ զուռուչ  
120 սլիտի զաֆար տաս. բայց Աստուած ողորմի  
Իպրահիմ շահին հողոյն եւ տէր Մարգարէի, զի  
նոքա ինձ բազում շահ եւ երախտիք արարին